

Ազդեցություն



Զրային տնտեսություն

Տեղեկատվություն տարեց մեծահասակների և ընտանեկան խնամողների համար

Զուրը մեր կյանքում ունի կենսական նշանակություն: Մենք այն օգտագործում ենք խմելու, կերակուր պատրաստելու, մաքրելու և մշակաբույսեր աճեցնելու համար: Քանի որ ջուրն այնքան անբաժանելի է մեր առօրյա գործերից, կարևոր է, որպեսզի սպառողները տեղյակ լինեն, թե երբ է այն անվտանգ:

Աղտոտված լինելու դեպքում, ջուրը կարող է վնասել մեր, մասնավորապես տարեց անձանց և քրոնիկ վիճակներ ունեցող մարդկանց, առողջությանը: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ և նրանք, ովքեր ունեն խաթարված իմունային համակարգ, նույնպես ավելի մեծ ռիսկի ներքո են:

Շրջակա միջավայրի աղտոտիչները կարող են հանդիպել խմելու ջրի և ռեկրեացիոն գործունեության ժամանակ, ինչպիսին է լողը: Զրի աղտոտիչների հետ շփումը կարող է նաև տեղի ունենալ կոյուղաջրերի արտահոսքի դեպքում: Դուք կարող եք պահպանել ձեր առողջությունը տեղեկանալով, թե դուք ինչպես կարող եք կրճատել կամ վերացնել ենթարկվածությունը ջրի աղտոտիչներին:

Տան ծորակի ջուրը.

Չնայած որ մեծամասամբ խմելու ջուրը անվտանգ է, սակայն աղտոտվածության դեպքեր կարող են պատահել և պատահում են: Աղտոտիչները, որոնք կարող են հանդիպել ջրում, ընդգրկում են քիմիական նյութեր, ինչպիսին են ռադոնը և կապարը, բակտերիաները և վիրուսները: Սույն բաժնում նկարագրվում են որոշ հավանական պրոբլեմներ, որոնք դուք կարող եք գտնել ձեր տնային տնտեսության ծորակի ջրում:

Մանրէներ.

Բակտերիաները և վիրուսները հայտնի են որպես մանրէներ: Նրանք առկա են, բայց դրանց մեծ մասը վնասակար չէ: Պատահաբար խմելու ջուրը կարող է պարունակել հիվանդաբեր մանրէներ, մասնավորապես այն մանրէները, որոնք առաջացնում են աղետաճողաբան հիվանդություն: Սովորաբար, մեր մարմնի պաշտպանիչ խոչընդոտները և իմունային համակարգերը կանխում են դրանց կողմից հիվանդություն առաջացնելը: Սակայն, մարդու իմունային համակարգի անկման հետևանքով կապված տարիքի և պաշտպանիչ խոչընդոտների

փոփոխությունների հետ, տարեց մեծահասակները առանձնակի ուշադրություն են մատնանում հիվանդությունների նկատմամբ: Զրում հանդիպող աղետաճողաբան (ԱՍ) ախտածին միկրոօրգանիզմներն ընդգրկում են մակաբույծներ, ինչպիսին է Կրիպտոսպորոդիումը և Ջիարդիան, բակտերիաներ, ինչպիսին են Ե. Կոլին, Սալմոնելան և Շիգելան և վիրուսներ, ինչպիսին է Նորվոկը: Ամեն տարի ԱՄՆ-ում տեղի է ունենում ԱՍ հիվանդությունների մոտ 211 միլիոն դրվագ¹:

Կապար.

Կապարին երկարաժամկետ ենթարկվածությունը կարող է առաջացնել առողջական պրոբլեմներ նյարդային համակարգում: Կապարը կարող է նպաստել արյան բարձր ճնշմանը, նյարդային խանգառումներին, ուշադրության և կենտրոնացման պրոբլեմներին և մկանային և հոդային ցավերին: Կապարը կուտակվում և պաշարվում է մեր ոսկրերում: Դաշտանադադարի ժամանակ, երբ ոսկրերը սկսում են քայքայվել, կապարը կարող է անջատվել ոսկրից, հանգեցնելով արյան մեջ կապարի բարձր մակարդակների: Նույնիսկ եթե ձեր տնային տնտեսության ջուրը մատակարարվում է բնակչության ջրամատակարարման ընկերության կողմից, կապարը կարող է առկա լինել՝ կենցաղային ջրատար համակարգերի կորոզիայի կամ կապարե սպասարկման գծերի առկայության հետևանքով:

Սկնդեղ.

Ապացուցված է, որ մկնդեղի բարձր մակարդակներին երկարաժամկետ ենթարկվածությունը կարող է հանդիսանալ քաղցկեղի պատճառ, առաջացնել սրտամոթային պրոբլեմներ և ավելացնել շաքարախտի դեպքերը: Սկնդեղով աղտոտվածությունը կամ առաջանում է բնականոն ճանապարհով (տեղական երկրաբանության մասով), կամ կարող է առաջանալ մկնդեղ պարունակող քիմիական նյութերի ընդգրկմամբ հողի մշակման հետ կապված արդյունաբերական կամ գյուղատնտեսական գործելակերպերի արդյունքում: ՇՄՊ-ն ունի ստանդարտ բնակչության խմելու ջրի համակարգերի համար, որպեսզի երաշխավորվի, որ մարդիկ չենթարկվեն մկնդեղի բարձր մակարդակների: Սակայն, ստանդարտով չեն ընդգրկվում մասնավոր ջրհորները, այն համակարգերը, որոնք ունեն 15-ից ավագ «միացումներ» կամ սպասարկում են 25 հոգի:

¹ Mead PS, Slutsker L, Dietz V, McCaig LF, Bresee JS, Shapiro C, Griffin PM, Tauxe RV. Food-Related Illness and Death in the United States. Emerging Infectious Diseases, 1999; 5(5):607-625

Տարեց մեծահասակները համարվում են առանձնակի խոցելի՝ ջրով անցնող աղտոտիչների նկատմամբ: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ և նրանք, ովքեր ունեն խաթարված իմունային համակարգ նույնպես գտնվում են ավելի մեծ ռիսկի ներքո:

ՇՄՊ-ի խմելու ջրի թեժ գիծ (800) 426-4791

Ջրագրկում

Տարեց մեծահասակները կարող են գտնվել ջրագրկման ռիսկի ներքո, քանի որ, ըստ մարդկանց տարիքի, ծարավի զգացողությունը նվազում է, և նրանք հաճախ չեն զգում խմելու կարիքը, նույն հաճախությամբ, ինչ երբ նրանք երիտասարդ էին: Նրանք կարող են նաև ընդունել դեղորայքներ, որոնք բարձրացնում են ջրագրկման ռիսկը կամ ունեն ֆիզիկական վիճակներ, որոնք դժվարեցնում են խմելը: Ջրում միկրոօրգանիզմներից ենթարկվածությունը կարող է հիվանդացնել մարդկանց, առաջացնելով փորլուծություն և բարձրացնելով ջրագրկման ռիսկը:

Ջրագրկման նշաններից են.

- Չոր կամ կաչուն բերան
- Ցածր միզարտադրություն կամ վերջինիս բացակայություն, խտացված մեզն ունի մուգ դեղին գույն
- Արցունքների բացակայություն
- Խոր ընկած աչքեր
- Լեթարգիական կամ կոմատոզ (սաստիկ ջրագրկմամբ)

Քանի որ ջրագրկումը կարող է լինել կյանքին սպառնացող, ամեն օր խմե՛ք առատ քանակությամբ ջուր: Եթե դուք կրճատել եք ծորակի ջրի սպառումը, քանի որ դուք չեք հավանում համը կամ մտահոգված եք դրա որակով, ապա դուք պետք է մաքրեք այն կամ գտնեք ջրի այլ աղբյուր մինչև պորբլեմի լուծումը:

Եթե ձեր խմելու ջուրը առաջանում է ջրհորից կամ փոքր համակարգից, ապա դուք կարող է ցանկանաք ստուգել այն մկնդեղի պարունակության համար:

Ռադոն.

Ռադոն գազը հանդիսանում է ԱՄՆ-ում թոքերի քաղցկեղի երկրորդ հիմնական պատճառը: Ըստ հաշվարկների 15 տներից գրեթե 1-ում առկա են ռադոնի բարձր մակարդակներ: Ռադոնը հատկապես վտանգավոր է այն պատճառով, որ այն անհոտ է և ոչ տեսանելի: Ռադոնը բնականոն եղանակով առաջանում է ապարներում, հողում և ջրում: Եթե ձեր տնային տնտեսության ջուրը ստացվում է ջրհորից, ապա ռադոնը անձրևի ժամանակ կարող է օդ արտանետվել: Եթե ձեր տանը առկա են ռադոնի բարձր մակարդակներ, ապա աղբյուրներից մեկը կարող է լինել ջրհորի ջուրը:

Ես ինչպե՞ս կարող եմ խուսափել ջրի հետ կապված վտանգներից:

Ամենակարևոր բայլը՝ տեղյակ լինել ձեր տեղական առողջապահության վարչության կամ շրջակա միջավայրի վարչության կողմից խորհուրդների մասին և հետևել նրանց խորհուրդներին:

- **Տեղեկացե՛ք ձեր խմելու ջրի մասին.** Եթե ձեր ջուրը ստացվում է հանրային ջրային համակարգից, ապա այն պետք է համապատասխանի ՇՄՊ-ի ստանդարտներին: Օկրուգներից պահանջվում է, որպեսզի նրանք օգտագործողներին ապահովեն ստուգման արդյունքներով: Ծանոթացե՛ք ձեր ջրամատակարարի ջրերի որակի տարեկան հաշվետվությանը, որը նաև կոչվում է սպառողի վստահության հաշվետվություն կամ զանգահարե՛ք ձեր ջրամատակարարին և ճշտե՛ք, թե արդյոք դուք պետք է մտահոգվեք աղտոտվածության որոշակի տեսակներով: Եթե դուք ապրում եք բազմաբնակարան շենքում, ապա խնդրե՛ք կառավարչին հրապարակային վայրում փակցնել սպառողի վստահության հաշվետվությունները: Եթե ձեր ջուրը ստացվում է ջրհորից, ապա այն ենթակա չէ ՇՄՊ-ի ստանդարտներին: Չեր տնային տնտեսությունը պետք է հատուկ նախագուշացումներ ձեռնարկի, ինչպիսիք են տարեկան ստուգումները, որպեսզի երաշխավորվի, որ ձեր ջուրն անվտանգ է:
- **Չեսե՛ք խմելու ջրի մասին հանրային ծանուցումներին.** ձեր ջրամատակարարից պահանջվում է տալ հանրային ծանուցումներ թերթերում, հեռուստատեսությամբ կամ առձեռն առաքմամբ՝ ջրով անցնող հիվանդության արտակարգ իրավիճակի առկայության մասին: Ծանուցման մեջ նկարագրվելու են բոլոր նախագուշացումները, որոնք դուք պետք է ձեռնարկեք, ինչպես

օրինակ, ջրի եռացումը կամ շշալցված ջրի օգտագործումը: Մեկ րոպեի ընթացքում ջրի եռացնելը սպանում է միկրոօրգանիզմները, բայց չի օգնի քիմիական աղտոտվածության հարցում:

- **Պիմե՛ք ձեր ջրամատակարարին ճշտելու, թե արդյոք դուք պետք է ստուգեք կապարի համար.** Կապարը տեսանելի չէ, անհոտ և անհամ է: Ջանգահարե՛ք ձեր տեղական առողջապահության վարչությանը կամ ջրամատակարարին ճշտելու, թե արդյոք դուք պետք է ստուգեք ջուրը կապարի համար: Մի՛ եռացրեք ձեր ջուրը: Ջրի եռացնելը կապարը չի հեռացնի ձեր ջրից, այլ փաստորեն կվաթառացնի ձեր պորբլեմը, քանի որ ջրի գոլորշիացման արդյունքում կապարի խտությունը կբարձրանա: Եթե դուք կարծում եք, որ ձեր ջրատար համակարգը կարող է կապար պարունակել, ապա խմելու և կերակուր պատրաստելու համար օգտագործե՛ք միայն սառը ջուր: Բաց թողե՛ք սառը ջուրը մինչև հնարավոր առավելագույն սառեցման աստիճանը, հատկապես եթե դուք մի քանի ժամ չեք օգտագործել ձեր ջուրը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարե՛ք Կապարի մասին տեղեկատվության ազգային կենտրոն՝ (800) 424-LEAD:
- **Ստուգե՛ք ձեր տան օդում ռադոնի պարունակությունը.** ոյություն ունեն մի շարք անալիզների ցածրարժեք լրակազմեր, որոնք դուք կարող եք գնել փոստով կամ մետաղական ապրանքների խանութներում: Անալիզը կատարելու համար դուք նաև կարող եք ներգրավել որակավորված մասնագետի: Եթե դուք ունեք ռադոնի բարձր մակարդակներ, ապա այն կարող է ձեր տուն մուտք գործել ջրի կամ հողի միջոցով: Եթե ձեր ջուրը ստացվում է բնակչության ջրամատակարարման համակարգից, ապա դիմե՛ք ձեր ջրամատակարարին: Եթե ձեր ռադոնի առկայությունը առաջացել է մասնավոր ջրհորից վերցվող ջրից, ապա զանգահարե՛ք ՇՄՊ-ի խմելու ջրի թեժ գծին՝ (800) 426-4791 հեռախոսահամարով:

Լողալուց առաջացող ջրի հետ կապված վտանգներ

Տարեց մեծահասակներին խորհուրդ է տրվում լինել ֆիզիկապես ակտիվ: Լողափերից մեծ մասը անվտանգ են լողալու համար: Սակայն, լողափի ջրերը կարող են պարունակել հիվանդաբեր միկրոօրգանիզմներ: Աղտոտված ջրերում լողալուց կարող է հանգեցնել թեթև հիվանդությունների, ինչպիսիք են կոկորդի ցավ կամ փորլուծությունը: Տարեց մեծահասակները թուլացած իմունային համակարգով ունեն աղտոտված ջրերից հիվանդանալու ավելի մեծ հնարավորություն:

- **Լողափերի փակումներ.** Նահանգները, ցեղերը և տեղական կառավարության առողջապահության և շրջակա միջավայրի գործակալությունները լողափերում չափում

և հայտնաբերում են միկրոօրգանիզմների մակարդակներ՝ ՇՄՊ-ի առողջապահական ստանդարտներին բավարարելը ստուգելու նպատակով: Երբ միկրոօրգանիզմների մակարդակները անվտանգ չեն լինում, գործակալությունները փակցնում են նախազգուշացումներ կամ փակում են լողափը: Փոթորիկներից հետո ամենայն հավանականությամբ մակարդակները բարձրանում են: Առողջական վիճակներով տարեց մեծահասակների համար կարևոր է ստուգել և հետևել լողափի խորհրդատվությանը, որովհետև նրանք կարող են ավելի ուշադրագայուն լինել մանրէների նկատմամբ, քան առողջ մեծահասակները:

Տանը ջրերի ներծծման հետ կապված վտանգները՝ մասնավորապես ջրհեղեղներից հետո

Տան ոչ համապատասխան սպասարկումը հանդիսանում է տարեց մեծահասակների համար աղտոտվածությանը ենթարկվելու հավանական աղբյուր: Սա կարող է հանգեցնել բորբոսի աճի, մասնավորապես եթե չբացահայտված է մնում խոնավության պրոբլեմը: Բորբոսը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ զգայուն անհատների մոտ, ինչպիսինն է փռշտոցը, հոսող քիթը, կարմիր աչքերը և մաշկի ցանր (դերմատիտ) և, որոշ ծայրահեղ դեպքերում, շնչառական պրոբլեմներ: Աղտոտիչների հետ շփումը կարող է տեղի ունենալ կոյուղաջրերից դեպի ձեր տուն հակահոսքի դեպքում: Եփում կարող է առաջանալ, երբ ձեր կեղտաջրերի հեռացման խողովակը, որը ձեզ միացնում է բնակչության կոյուղացանցի կամ սեպտիկ համակարգի հետ, խցանված է՝ ծառերի արմատներից ներծծման հետևանքով:


- **Ստուգե՛ք ձեր տան հոսակորուստները.** Սահմանե՛ք կանոնավոր ծրագիր ձեր տան ջրի հոսակորուստների հետ կապված պրոբլեմների համար՝ լրգասեմյակներում, լվացքասենյակում և պատուհանների և դռների շուրջը: Մի՛ անտեսե՛ք տանիքի ջրորոգանները և ակոսիկները: Փնտրե՛ք հոսակորուստների նշաններ:
- **Վերացրե՛ք ջուրը՝ բորբոսը վերացնելու համար.** Բորբոսը աճելու համար ունի ջրի կարիք: Բորբոսը կանխելու համար հնարավորինս արագ շտկե՛ք ջրագծում եղած հոսակորուստները և ջրի հետ կապված այլ պրոբլեմներ: Ձեր տնից բորբոսը վերացնելու նպատակով մաքրե՛ք բորբոսը և վերացրե՛ք ջրի աղբյուրը: Որոշ մաքրող միջոցներ նախատեսված են բորբոսի աճը մշակելու համար:
- **Ջրհեղեղից հետո մաքրե՛ք վնասված տարածքը.** Ջրհեղեղները ստեղծում են առողջապահական ռիսկեր: Կոյուղաջուրը և այլ նյութեր կարող են մուտք գործել ձեր տուն հեղեղաջրերի միջոցով: Նույնիսկ,

Ես ի՞նչ պետք է անեմ, եթե ես չեմ կարող խմել իմ ջուրը:

Արտահոսքերի կամ մաքրման հետ կապված ժամանակավոր խնդիրների դեպքում, դուք կարող է ի վիճակի չլինեք կարճ ժամանակով խմել ձեր ջրից: Հնարավոր է, որ հատուկ առողջական կարիքներ ունեցող մարդիկ կամ ջրի հայտնի աղտոտվածության վայրերում ապրող մարդիկ պետք է քննարկեն իրենց համար երկարաժամկետ կտրվածքով այլընտրանքային ջրաղբյուրների հարցը:



- **Հետևե՛ք խմելու ջրի մասին հանրային ծանուցումներին.** Ձեր ջրամատակարարից պահանջվում է տալ հանրային ծանուցումներ թերթերում, հեռուստատեսությամբ կամ առձեռն առաքմամբ՝ ջրով անցնող հիվանդության արտակարգ իրավիճակի առկայության մասին: Ծանուցման մեջ նկարագրվելու են բոլոր նախազգուշացումները, որոնք դուք պետք է ձեռնարկե՛ք, ինչպես օրինակ, ջրի եռացումը կամ շշալցված ջրի օգտագործումը: Մեկ րոպեի ընթացքում ջրի եռացնելը սպանում է միկրոօրգանիզմները, բայց չի օգնի քիմիական աղտոտվածության հարցում:
- **Խմե՛ք շշալցված ջուր.** Որոշ ընկերություններ վարձով են տալիս կամ վաճառում են ջրի բաշխիչ սարքեր կամ ցայտաղբյուրներ և կանոնավոր կերպով առաքում են ջրի մեծ շէր տների կամ կազմակերպությունների համար: Շշալցված ջուրը կարող է թանկ լինել համեմատած հասարակական ջրային համակարգից ստացվող ջրի հետ: Շշալցված ջրի դրակը տարբեր է տարբեր ապրանքանիշերի մոտ՝ կապված օգտագործվող ջրաղբյուրների, ծախսերի և ընկերության գործելակերպերի տարբերության հետ: Խաթարված ինունային համակարգերով անձինք կարող է ցանկություն ունենան կարդալու շշալցված ջրերի պիտակները՝ երաշխավորելու, որ կիրառվել է ավելի խիստ մաքրում, ինչպիսինն են օսմոսը, թորումը, Մ ճառագայթումը կամ գտումը 1 միկրոնային բացարձակ զտիչով: Ձեր շշալցված ջրի ՄԴՎ-ի ստանդարտներին համապատասխանելու հետ կապված լրացուցիչ տեղեկատվության համար ճշտե՛ք «NSF International»-ի հետ (http://www.nsf.org/consumer/bottled_water/ or call 877-8-NSF-HELP):
- **Տեղադրե՛ք տնային մաքրման համակարգ.** Եթե դուք ունեք երկարաժամկետ պրոբլեմ կապված ջրի հետ, ապա կարող է պահանջվել տնային մաքրում: Տնային մաքրումը կարող է ընդգրկել ծորակի վրա կամ մայր ջրատարի և տան ցանցի միացման տեղում օգտագործվող զտիչներ: Ռադոնի պրոբլեմ ունենալու դեպքում, տնային մաքրումը կարող է լուծում հանդիսանալ:



Երբ հեղեղաջրերը մաքուր են, միևնույն է կանգուն ջրերը և խոնավ նյութերը հանդիսանում են միկրոօրգանիզմների բուծման հիմք: Հեռացրեք կանգուն ջրերը, չորացրեք ձեր տունը և հեռացրեք խոնավ նյութերը: Մաքրեք և պատազերծեք վնասված տարածքը՝ ձեր հիվանդանալու ռիսկը կրճատելու համար: Եթե կոյուղաջուրը մուտք է գործել ձեր տուն, ապա կարող է պահանջվել գորգերի, վարագույրների և կահույքի փոխարինում:

- **Ջրհեղեղից հետո, ստուգեք ձեր ջրհորները:** Եթե դուք ունեք մասնավոր ջրհոր, ապա մի՛ միացրեք պոմպը կամ օգտագործեք ջրհորի ջուրը խմելու կամ լվացքի համար: Խոսեք ձեր նահանգի կամ տեղական առողջապահության վարչության հետ՝ ճշտելու, թե ինչ նախագուշացումներ ձեռնարկել:

Ես ինչպե՞ս կարող եմ պահպանել իմ մասնավոր ջրհորի ջուրը:

Մասնավոր խմելու ջրի մատակարարումները ՇՄՊ-ի ստանդարտներին ենթակա չէ: Եթե ձեր ջուրը ստացվում է ջրհորից, ապա պորբլեմները բացահայտելու համար այն ինքնաբերաբար չի ստուգվելու փորձագետների կողմից: Դուք պետք է ձեռնարկեք հատուկ նախագուշացումներ, որպեսզի երաշխավորեք ձեր խմելու ջրի պահպանությունը և պահպանումը:

Հայտնաբերե՞ք հավանական պորբլեմները

Հավանական պորբլեմների հայտնաբերումը հանդիսանում է ձեր խմելու ջրի ապահովման առաջին քայլը: Սկսեք խորհրդակցելով ձեր տեղական փորձագետի հետ, ինչպիսին է ձեր տեղական առողջապահության վարչությունը, գյուղատնտեսական գիտասփյուռի գործակալը, մոտակա հանրային ջրային համակարգը կամ տեղական համալսարանի երկրաբանը: Հարցրեք նրանց այն պորբլեմների մասին, որոնք կարող են ազդել ձեր ջրհորի ջրի որակի վրա:

Յուրաքանչյուր տարի ստուգե՞ք ձեր ջրհորի ջրի որակը

Յուրաքանչյուր տարի ստուգե՞ք ձեր ջրհորի ջրի որակը՝ բակտերիաների, միտարոնների, ընդհանուր լուծված մասնիկների և pH-ի մակարդակների համար: Եթե դուք կասկածում եք այլ աղտոտիչների հարցում, ապա ստուգե՞ք նաև դրանք: Շատ աղտոտիչներ անգույն են և անհոտ, ուստի առանց անալիզի դուք չեք կարողանա արձանագրել պորբլեմը:

Ավելի հաճախ անցկացվող ջրի անալիզներ կարող են պահանջվել, երբ.

- ընտանիքներում կան անբացատրելի հիվանդություններ
- ձեր հարևանները իրենց ջրում հայտնաբերում են վտանգավոր աղտոտիչ

- դուք փոփոխություն եք նկատում ջրի համի, հոտի, գույնի կամ պարզության մեջ
- ձեր ջրհորի մեջ կամ կողքին տեղի է ունենում քիմիական նյութերի կամ վառելիքների արտահոսք
- դուք նորոգում կամ փոխարինում եք ձեր ջրհորի համակարգի ինչ-որ մաս

Կանխե՞ք պորբլեմները

Պահե՞ք պարարտանյութերը, պեստիցիդները, հերբիցիդները, վառելիքները և այլ աղտոտիչներ ջրհորից հեռու: Եղե՞ք ուշադիր ջրհորի շուրջը աշխատելիս կամ խոտ կտրելիս: Դիմե՞ք հանրային առողջապահության ձեր տեղական վարչությանը, որպեսզի ճշտեք, թե որքան հաճախ դուք պետք է մղեք և ստուգեք ձեր սեպտիկ համակարգը: Մի՛ հեռացրեք վտանգավոր նյութեր սեպտիկ համակարգերի մեջ:

Ես ինչպե՞ս կարող եմ ավելի իմանալ:

ՇՄՊ-ի Ծերանալու նախաձեռնությունը գործում է տարեց մեծահասակներին շրջակա միջավայրով պայմանավորված առողջապահական ռիսկերից պաշտպանելու համար՝ հետազոտությունների համակարգման, կանխարգելիչ ռազմավարությունների և հանրային կրթության միջոցով: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՞ք www.epa.gov/aging.

Լրացուցիչ ռեսուրսներ.

Ջուրը ծորակից. դուք ի՞նչ պետք է իմանաք
www.epa.gov/safewater/wot/index.html

Սկնդեղը խմելու ջրում
www.epa.gov/safewater/arsenic.html

Լողափեր
www.epa.gov/beaches/

Ռադոնից պաշտպանվելու սպառողի ուղեցույց
www.epa.gov/radon/pubs/consguid.html#howenters

Խմելու ջրի արտակարգ պատագրոթում
www.epa.gov/safewater/faq/emerg.html

Ջրհեղեղներ
www.epa.gov/iaq/pubs/flood.html

Ուղեցույց խիստ թուլացած իմունային համակարգով մարդկանց համար
www.epa.gov/safewater/crypto.html

Տեղեկատվություն մասնավոր ջրհորների սեփականատերերի համար
www.epa.gov/safewater/privatewells/whatdo.html

Ռեսուրսներ բորբոսի վերաբերյալ
www.epa.gov/mold/moldresources.html

Ավտանգ խմելու ջուր
www.epa.gov/safewater/dwinfo/index.html



Armenian translation of: *Water Works*
Publication Number: EPA 100-F-08-021